ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25, info@cpcarmenia.am
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25, info@cpcarmenia.am

01/1439-2026
21.05.2026թ.

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻ ԼՐԱԳՐՈՂ
ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
(karapetyanmkrtich95@gmail.com)

Հարգելի՛ պարոն Կարապետյան,

2026 թվականի մայիսի 12-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված Ձեր հարցմանն ի պատասխան՝ հայտնում եմ հետևյալը.

1. 2026 թվականի ապրիլին Երևանում և Գյումրիում կայացած «Խաղաղության ձայն» երաժշտական փառատոնի ընթացքում կուսակցությանը բնեղենով նվիրատվություն կատարելու ենթադրյալ դեպքի վերաբերյալ «Անկախ դիտորդ»-ի կողմից Հանձնաժողով ներկայացված հաղորդման հիման վրա Հանձնաժողովում որևէ վարույթ չի նախաձեռնվել՝ նման լիազորություն չունենալու հիմքով: Մասնավորապես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ *Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացնում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ*

վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը: Օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հանձնաժողովն ստուգում է կուսակցության ներկայացրած տարեկան հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին:* «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը:* Վերոգրյալ օրենսդրական կարգավորումներից պարզ է դառնում, որ կուսակցության տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացվում է հաջորդող տարում, հետևաբար, Հանձնաժողովն իրավասու չի որևէ վարույթ կամ ստուգում նախաձեռնել այս փուլում: Հետևաբար՝ Հանձնաժողովում վերոգրյալ դեպքի վերաբերյալ վարույթ նախաձեռնելու կամ դրա արդյունքներով որոշում կայացնելու վերաբերյալ համապատասխան վարչական ակտ առկա չէ: Օրենքի 40.1-ին հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *Կուսակցության կողմից Հանձնաժողովի սահմանած ժամկետում հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին չհիմնավորվելու և* ***հաշվետվության ստուգման արդյունքում*** *«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջների խախտումներ հայտնաբերվելու դեպքում Հանձնաժողովը* ***հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:***

2. Այնուամենայնիվ, ելնելով Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատի բնույթից և քաղաքական ֆինանսների թափանցիկության ու հաշվետվողականության

սկզբունքներից քննարկվող դեպքի առնչությամբ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունից (այսուհետ՝ Կուսակցություն) հայցվել է տեղեկատվություն 2026 թվականի ապրիլի 19-ին Գյումրի քաղաքի Վարդանանց Հրապարակում և 2026 թվականի ապրիլի 25-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում տեղի ունեցած միջոցառումների վերաբերյալ, որին ի պատասխան Կուսակցությունը հայտնել է հետևյալը.

«2026 թվականի ապրիլի 19-ին Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում և 2026 թվականի ապրիլի 25-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում տեղի ունեցած համերգային միջոցառումներին «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունը չի ունեցել որևէ առնչություն կամ մասնակցություն:»:

Հանձնաժողովը, քննարկելով ներկայացված տեղեկատվությունը, և համադրելով այն բաց աղբյուրների ուսումնասիրության արդյունքների հետ, արձանագրել է, որ զանգվածային լրատվության միջոցներում և հանրային հարթակներում առկա հրապարակումների համաձայն՝ 2026 թվականի ապրիլի 25-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում իրականացված միջոցառումը հանրությանը ներկայացվել է որպես «Դոմինո փրոդաքշն»-ի կողմից կազմակերպված և գլխավոր հովանավոր՝ Fast Bank-ի կողմից ֆինանսավորվող Խաղաղության ձայնը խորագրով միջոցառում, իսկ 2026 թվականի ապրիլի 19-ին Գյումրիի Վարդանանց հրապարակում իրականացված միջոցառումը՝ նույն խորագրով համերգ, որի շրջանակներում հայտարարվել է «Վարչաբենդ» խմբի ելույթի հրավերի մասին: Միևնույն ժամանակ, նշված միջոցառումը ժամանակագրորեն համընկել է Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնական այցի և պետական նշանակության ծրագրերի իրականացման (մասնավորապես՝ Հյուսիս-հարավ ճանապարհահատվածի բացման) հետ: Այդուհանդերձ, բաց աղբյուրներում բացակայում է որևէ հստակ փաստական տեղեկատվություն այդ միջոցառման իրավաբանական կազմակերպչի, պետական կամ

համայնքային գնումների շրջանակներում կնքված պայմանագրերի, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ:

Թեև միջոցառումների ընդհանուր համատեքստը հաշվի առնելով բարձրաստիճան պաշտոնատար անձանց ներկայությունը և հանրային ընկալումը՝ անկողմնակալ դիտորդի մոտ կարող է օբյեկտիվ տպավորություն ձևավորվել, որ նախաձեռնությունն իրականացվել է Կուսակցության օգտին կամ կողմից, այնուամենայնիվ, վարչական մարմնի կողմից կոնկրետ հանգամանքները հաստատված համարելու և իրավական հետևություններ անելու համար անհրաժեշտ են որոշակի և ստուգելի փաստական տվյալներ: Հետևաբար, բաց աղբյուրներում առկա անուղղակի տեղեկությունները և Կուսակցության տրամադրած պարզաբանումն ինքնին չեն ընդունվում որպես միանշանակ և անառարկելի հիմնավորում, սակայն ներկա փուլում, վերագրելիության և կազմակերպչական ծախսերի վերաբերյալ բավարար փաստական ապացույցների բացակայության պայմաններում, Հանձնաժողովը զրկված է որևէ արձանագրում իրականացնելու հնարավորությունից:

3. Ինչ վերաբերում է, հարցմամբ նշված 4-6-րդ հարցերին, ապա հայտնում եմ, որ Հանձնաժողովը չի ուսումնասիրել Fast Bank-ի կողմից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու փաստը՝ հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ քննարկվող հարցի համակողմանի քննության, առկա ռիսկերի ամբողջական գնահատման և վերջնական պատասխանի ձևավորման նպատակով Հանձնաժողովը պետք է կիրառի վերահսկողության իր ամբողջական գործիքակազմը, ինչն իրավաչափորեն հնարավոր է իրագործել բացառապես Կուսակցության 2026 թվականի տարեկան հաշվետվության ստուգման փուլում: Հետագա վերահսկողական գործառույթների՝ մասնավորապես տարեկան հաշվետվության ստուգման շրջանակներում, նոր փաստական տվյալների կամ հանգամանքների ի հայտ գալու պարագայում Հանձնաժողովը կիրականացնի լրացուցիչ քննություն՝ Օրենքով սահմանված լիազորությունների ողջ ծավալով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ստորագրող
ԼՈՒԻԶԱ ՍԱՐԳՍՅԱՆ
5511900508

2026-05-21 15:29:38 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՒԻԶԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝
Ա. Գևորգյան
Կուսակցությունների ֆինանսական գործունեության
Վերահսկողության բաժին
+37412777740